



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 22-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ԹԻՎ 08 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՏՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը

Դալար համայնքի ավագանին որոշում է՝ Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2019թվականի հուլիսի 23-ի թիվ 08 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից ուղղակի վաճառքի թույլտվություն տալու մասին:

2. Դալար համայնքի սեփականություն հանդիսացող հասարակական նպատակային նշանակության շինությունը և հողամասը մրցութային կարգով վարձակալության օգտագործման տրամադրելու մասին:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱԹՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԷԼԿ

ՄԵԶԼՈՒՄՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱԶԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՐՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 23-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով, Հիմք ընդունելով Զ. Անդրանիկի 32 հասցեի սեփականատեր Սերգեյ Հարությունյանի խնդրանքը համայնքի ղեկավարին:

համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Դալար համայնքի ղեկավարին Դալար համայնքի տարածքում Զ. Անդրանիկի փողոցի թիվ 32/1 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության, հողատեսքը՝ այլ հողեր, կադաստրային ծածկագիրը՝ 03-032-0002-0025, մակերեսը՝ 175.6 քառ. մետր հողամասը ուղղակի վաճառքի ձևով, հողամասի կադաստրային արժեքով օտարել հարակից Զ.Անդրանիկի փողոցի թիվ 32 հասցեում /կադաստրային ծածկագիր՝ 03-032-0002-0010, մակերեսը՝ 0.105հա/ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր Սերգեյ Կարենի Հարությունյանին, քանի որ նշված օտարվող հողամասի չափերը, տեղանքի ռելիեֆն ու դիրքը թույլ չեն տալիս, որպես առանձին գույքային միավոր օտարել, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա և չի կարող օգտագործվել այլ անձի կողմից, քանի որ այնտեղ հնարավոր է մուտք գործել միայն ընդլայնվող հողամասից:

2. Սահմանել, որ՝

1/ Հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունումից հետո, Դալար համայնքի բյուջեի N 900415166116 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային

արժեքը, որը կազմում է 92717 (իննսուններկու հազար յոթ հարյուր տասնյոթ)
Հայաստանի Հանրապետության դրամ:

2/ Նշված հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային
օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵԶԼՈՒՄՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱԶԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2019 թվականի N 24-Ա

**ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի.

համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 20 տարի ժամկետով վարձակալության տրամադրել համայնքի Կոմիտասի փողոց թիվ 51 հասցեում գտնվող, 03-032-026-020-001 կադաստրային ծածկագրով հասարակական նշանակության 125,7 քառ. մ շինությունը և հողամասը՝ 0.0533 հա մակերեսով/նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, ծածկագիր՝ 03-032-026-020/:

2. Տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 96000/իննսունվեց հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ: Նախավճար սահմանել մեկնարկային գնի 5% չափով՝ 4800/չորս հազար ութ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ: Մրցույթի մասնակցության վճար սահմանել 1000 ՀՀ դրամ:

3. Դալար համայնքի սեփականություն հանդիսացող Կոմիտասի 51 հասցեում գտնվող անշարժ գույքը օգտագործել համայնքում հացարուկեղենի արտադրամաս հիմնելու նպատակով:

Մրցույթի օրը նշանակել 2019 թվականի օգոստոսի 29-ին:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱԶԻԿ ԿԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԳՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆ

